

Ադրբեջանական կլիկը

## ԾԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԹՆՈԼՈՐՏ

*Զրույց Ժերալդ Քնաուսի հետ, որի «Եվրոպական կայունության նախաձեռնություն» վերլուծական կենտրոնը հայտնաբերել է Բունդեսթագի պատգամավորների կասկածելի կապերը Ադրբեջանի հետ:*

Միխայել Մարտինես



*Եվրոպայի խորհրդի (ԵԽ) երես ստած պատգամավորները չէին ուզում այստեղ քաղբանտարկյալներ հայտնաբերել. տեսարան դեպի բոցաձև երկնաքերերով Բաքու քաղաք:*

-Պարոն Քնաուս, Ձեր վերլուծական կենտրոնի՝ «Եվրոպական կայունության նախաձեռնություն», կարճ՝ ԵԿՆ, զեկույցներով ավելի քան տաս տարի առաջ Դուք բախվեցիք մի զարգացման, որը Բունդեսթագում ալիքներ է բարձրացնում նաև հիմա. հայտնապես, «Քրիստոնեա-դեմոկրատական միության» (ՔԴՄ, գերմ.՝ Christlich Demokratische Union) / «Քրիստոնեական-սոցիալական միության» (ՔՍՄ, գերմ.՝ Christlich-Soziale Union) ներկա և նախկին որոշ պատգամավորներ իրենց թույլ են տվել գնվել Ադրբեջանի բռնապետ Իլհամ Ալիևի վարչակարգի կողմից: Ինչպե՞ս սկսվեցին այդ հետազոտությունները:

2009 թ. մենք, իրականում, ուսումնասիրում էինք Ադրբեջանում կանանց իրավունքների վիճակը, երբ տեղի ունեցավ վիճահարույց մի հանրաքվե, որը պետք է հնարավոր դարձներ Իլհամ Ալիևի ցմահ նախագահությունը: Եղան բողոքներ ու ձեռքարկություններ: Բաքվի մի ռեստորանում երկու երիտասարդ ակտիվիստներ, որոնց մենք ծանոթ էինք, ծեծի ենթարկվեցին վճարված խուլիգանների կողմից: Երբ նրանք դիմեցին ոստիկանություն, հանցագործների դեմ հետաքննություն չիրականացվեց, այլ նրանք ձեռքարկվեցին և

դատապարտվեցին ազատազրկման: Ահա, մենք որոշեցինք ուսումնասիրել երիտասարդ այլախոհների դրությունը և հանդիպեցինք անսպասելիին. մինչդեռ երկրում բռնաճնշումը հետզհետե ավելի էր սաստկանում, ԵՄ-ի կողմից (որում Ադրբեջանն ընդունվեց 2001 թ.) վիճակի գնահատումը, դրա հետ միասին, դառնում էր հետզհետե ավելի դրական: Դատարօրինակ էր: Մենք սկսեցինք ուսումնասիրել, թե ինչպես կարող էր բանը դրան հասնել:

**-Սկզբում կոռուպցիայի դեռ ոչ մի կասկած չկա՞ր արևմտյան քաղաքական գործիչների նկատմամբ:**

Ես չէի կարող պատկերացնել, թե շուտով ինչ ենք պարզելու ԵՄ-ի և այնտեղ գործող եվրոպացի քաղաքական գործիչների մասին: Ես միամիտ էի: 2012 թ. ինսայդերները մեզ բացատրեցին, թե ինչպես էր աշխատում այս քաղաքականությունը. խորհրդարանականները՝ ամբողջ Եվրոպայից, ստանում էին զարդեր, արձակուրդային ուղևորություններ և փող, ընտրադիտորդները՝ նաև տասնյակ հազարավոր եվրոներ՝ Ադրբեջանի մասին դրականորեն արտահայտվելու համար: ԵՄ-ի աշխատակիցները կուլիսներում մեզ հաստատեցին, որ Ադրբեջանի գործողության եղանակը բացահայտ գաղտնիք է Ստրասբուրգում: Ուրիշ խորհրդարանականներ պարզաբանեցին, որ երկար ժամանակ կասկածել են որոշ գործընկերների, քանի որ Բաքվում նրանք իրենց տարօրինակ էին պահում: Բայց ինչպե՞ս գրել այդ մասին՝ առանց հիմնավոր ապացույցների: Խնդիրը, ամենից առաջ, հստակ բացատրելն էր, թե վարչակարգն ինչպես էր ԵՄ-ում ռազմավարականորեն զբաղվում քվեների գնմամբ և նկարագրելը, թե ով ինչպես էր հրապարակավ արտահայտվում Ադրբեջանի մասին և քվեարկում: Մենք ընդօրինակեցինք, թե ինչպես են ԵՄ-ի «կլաստերներն» ադրբեջանական վարչակարգի ջատագովներին համակարգայնորեն բարձրացնում ղեկավար դիրքերի: Մենք տեսանք. յուրաքանչյուր բանավեճում որոշ պատգամավորներ խոսք էին խնդրում Ադրբեջանի վերաբերմամբ՝ վարչակարգին պաշտպանելու նպատակով: Ամբողջ Եվրոպայից շատ քաղաքական գործիչներ պարբերաբար մեկնում էին Բաքու՝ այնտեղ, որպես ընտրադիտորդ, ընտրություններն ազատ և արդար որակելու համար, չնայած այդ քվեարկություններն ընթանում էին այնպես, ինչպես Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում (ԳԴՀ):

**-Եվ Դուք մտածում էիք, որ կարող էք մի քանի զեկույցով այս համակարգը տապալել ՚:**

Մենք հույս ունեինք՝ երբ մենք դա նկարագրենք, պետք է քննություն անցկացվի: Խոսքը Եվրոպայի՝ մարդու իրավունքների կարևորագույն ինստիտուտում պատգամավորների կաշառակերության մասին էր: Բայց դա նույնպես միամտություն էր: Հաջորդ հինգ տարիների ընթացքում ինչպես Ադրբեջանում, այնպես էլ ԵՄ-ում ամեն ինչ շատ ավելի վատացավ:

**-ԵԿՆ-ն դրոշմե՞ց Ադրբեջանի «խավիարային դիվանագիտություն» եզրույթը. ի՞նչ է դա նշանակում:**

Մենք այսպես կոչեցինք 2012 թ. մայիսի մեր զեկույցը, որում նկարագրում էինք, թե ինչպես Ալիևի վարչակարգը ներթափանցեց ԵՄ: Այս քաղաքականության խորհրդանիշը «խավիարն» էր, բայց իրականում խոսքը շատ փողի մասին էր՝ զարդեր, թանկարժեք գորգեր, դեպի Բաքու բիզնես կարգի թռիչքների հրավիրներ՝ Ստամբուլի շքեղ հյուրանոցներում կանգառով: Սա փոճարկում էր. ով ընդունում էր այդպիսի նվերներ, ավելի շատ, ավելի մեծ նվերների հավակնորդ էր: Այդ, ահա, աշխատեց նաև իտալացի քրիստոնեա-դեմոկրատ Լուկա Վոլոնտեի դեպքում, որն այս տարվա հունվարին Միլանում, առաջին ատյանում դատապարտվեց չորս տարվա ազատազրկման՝ Ադրբեջանից դրամական կաշառք ընդունելու պատճառով: Վոլոնտեն ինչ-որ պատգամավոր չէր, այլ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄՎ), որին պատկանում էր նաև ՔԴՄ-ն, ամենամեծ խմբակցության՝ «Եվրոպայի ժողովրդական կուսակցություն» (ԵԺԿ) նախագահն էր: Այլոց հետ միասին, որոնց նա թվարկում էր Բաքվի իր համագործակիցներին ուղղված

Էլեկտրոնային նամակներում, նա օգնեց մոբիլիզացնել պատգամավորների մեծամասնությունը՝ 2013 թ. հունվարին Ադրբեջանի քաղաքատարկյալների վերաբերյալ բանաձևին դեմ քվեարկելու համար: Այդ խայտառակ քվեարկության մի հետևանքն Ադրբեջանում ձերբակալությունների հերթական ալիքն էր: Նաև բոլոր նրանք, ովքեր Բաքվում համագործակցել էին ԵԽ-ի հետ, ձերբակալվեցին: Մեկ այլ հետևանք էր այն, որ Ալիևը կարողացավ հրապարակավ սառնասրտորեն հայտարարել, որ իր երկրում քաղաքատարկյալներ չկան, որ դա վերջապես հաստատել է ԵԽ-ն՝ 125 ձայնով:

**- Կարո՞ղ էր դա ապացուցվել դատարանում:**

Միայն այն դեպքում, եթե դատախազները, այն բերեին դատարան, ինչպես Միլանում: Իտալիայի դատախազությունը ցույց տվեց, որ 2012 թ. վերջին Միլանում Վոլոնտեն հիմնել էր «խորհրդատվական ֆիրմա»: Երեք շաբաթ անց Ադրբեջանից փոստարկղային ընկերության միջոցով դրա հաշվին եկավ 220.000 եվրո: Վերջում, մինչև 2014 թ. կեսերը, Վոլոնտեն փոխանցվեց բոլորը միասին 2,4 միլիոն եվրո, և նա ակնկալում էր նույնիսկ ավելի քան 10 միլիոն: Այն, որ դա տեղի չունեցավ, կախված էր Իտալիայի բանկային վերահսկողությունից և Միլանի դատախազներից, որոնք ապահովեցին հաղորդակցությունն ադրբեջանցի փոխատուների հետ Վոլոնտեի շուրջկալի ժամանակ:

**- Ինչպիսի՞ կապեր կային Գերմանիայի հետ:**

Դեռ տարիներ առաջ այնտեղ միշտ Ադրբեջանի կողմն էր բռնում նաև Բունդեսբանկի ԲՄՄ նախկին պատգամավոր Էդուարդ Լինտները՝ ի միջի այլոց, Ներքին գործերի նախարարության և, մինչև 2010 թ. հունվարը, ԵԽ-ի խորհրդարանական պետքարտուղարը: ԵԽ-ում պաշտոնավարության ընթացքում և այնուհետև Լինտները նույնպես պարբերաբար մեկնում էր Ադրբեջան՝ ընտրադիտորդակումների: Նա նույնիսկ դրվատեց 2013 թ. ամբողջովին մանիպուլացված խորհրդարանական ընտրությունները՝ իբրև օրինակելի: Լինտները ֆինանսավորեց նաև Բաքվում միշտ վարչակարգի երկրպագուների վերափոխվող ուրիշ քաղաքական գործիչների՝ «ընտրությունների՝ մասնավոր դիտորդական առաքելություններին»: Վերջինյան կողմների տերերի հետ նույն փոստարկղային ֆիրմաները, որոնք Բաքվից գումար էին փոխանցել Վոլոնտեի խորհրդատվական ֆիրմային, փող էին փոխանցում Լինտներին: 2020 թ. սկզբից Գերմանիայի դատախազները քննում են, թե խոսքն ինչի մասին էր:

**- Բունդեսբանկում ԲՄՄ / ԲՄՄ ճնշող մեծամասնությունն, անկասկած, կոռումպացված չէ: Բայց տարիներ շարունակ ինչու՞ էր այն հանդուրժում խմբակից մի քանի գործընկերների՝ Ադրբեջանի հետ կասկածելի և, հավանաբար, շահութաբեր շփումների պարզորոշ վկայակոչումները: Կուսակցական կարգուկանոնից ելնելով՝ Գերմանաբեռնվածությունի՞ց: Անտարբերությունի՞ց:**

Ադրբեջանը և ԵԽ-ն շատերին պատկերանում են որպես կողմնակի թեմաներ, որոնց կողմից Գերմանիայում ընտրողները չեն կարող մոբիլիզացվել: Սակայն մոլորություն է կարծել, որ շատ հեռու է և մեզ չի վերաբերվում: Ստրասբուրգում՝ ԵԽԽՎ-ում, որը տարեկան չորս անգամ նիստեր է անում, նստած են ազգային խորհրդարանների, Գերմանիայի դեպքում, հետևապես, Բունդեսբանկի պատգամավորներ: Երբ Ստրասբուրգում պատգամավորները թույլ են տալիս իրենց կաշառել, դրանից հետո նրանք այս իմաստով շարունակում են աշխատել ազգային խորհրդարաններում՝ որպես կոռումպացված քաղաքական գործիչներ: Եվ եթե նույնիսկ մենք՝ Կրոյցբերգի փոքրիկ վերլուծական կենտրոնը, կարողացանք իմանալ, թե ինչ էր տեղի ունենում Ստրասբուրգում, ապա, անկասկած, դա գիտեն նաև մեծ երկրների գաղտնի ծառայությունները: Այսպես քաղաքակն գործիչները շանտաժի նկատմամբ դառնում են խոցելի, նաև՝ ազգային խորհրդարաններում և իրանց հետագա կարիերայում: Լուկա Վոլոնտեն Բաքվում հանդիպեց ադրբեջանցի միջնորդների հետ՝ ԵԽ-ի ռուսական

պատվիրակության անդամների ներկայությամբ՝ ռազմավարություններ քննարկելու համար: Ավելին՝ ԵԽ-ի խորհրդարանականներն են ընտրում Մարդու իրավունքների դատարանի դատավորներին:

**-Իտալիայում և Գերմանիայում դատախազությունները հետաքննություն են վարում կոռուպցիոն դաշինքի հավանական մասնակիցների դեմ: Այլ պետություններում արձագանքներ կային:**

Այլ երկրների դատախազությունները նույնպես պետք է զբաղվեն ցուցմունքներով: Բայց մինչև այժմ վարչակարգի գրեթե բոլոր ջատագովները, որոնց մասին մենք հաղորդեցինք, մնացել են անվրդով: Իդեալական կլիներ, եթե մասնակիցներից մեկը շահագրգռվածություն ունենար հանդես գալու որպես գլխավոր վկա:

**-Ուշագրավ է, որ ԵԿՆ-ի զեկույցները սկզբնապես տարիներ շարունակ ընդհանրապես ոչնչի չեն նպաստել: Ինչո՞ւ էին մասնակիցներն իրենց այդքան ապահով զգում:**

Ստրասբուրգում ծախվածության ընդհանուր մթնոլորտն այնքան էր ընդլայնված, որ որոշ պատգամավորներ, որոնք վրդովված էին դրանից, հաճախ ներքուստ հրաժարական էին տալիս: 2012 թ. հետո հինգ տարի բացահայտ կերպով «խավիարային դիվանագիտություն»-ը շարունակվեց: Բաքվի վարչակարգը նույնիսկ ձեռքակալեց ԵԽ-ի ադրբեջանցի խորհրդականներին: Այն իրեն այդքան ապահով էր զգում: Բացի դրանից՝ որոշակի շրջանակների կողմից Բրյուսելում տարածվեցին հաղորդումներ, որոնք հավատացնում էին, թե մենք ֆինանսավորվում ենք Հայաստանի կամ ռուսական գազային լոբբիի կողմից՝ ադրբեջանական խողովակաշարերի խափանման համար: Ավելին՝ Թորբյորն Յագլանդը՝ ԵԽ-ի այն ժամանակվա գլխավոր քարտուղարը և այդ ժամանակ Խաղաղության Նոբելյան մրցանակի կոմիտեի նախագահը, ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերում պարզաբանման հանդեպ:

**-Դուք պնդում եք, որ ԵԽ-ի գլխավոր քարտուղարը կոռուպցիայի մաս էր կազմո՞ւմ:**

Ոչ: Բայց Յագլանդը, հաշվի առնելով այն, ինչը հայտնի էր Ստրասբուրգում, պետք է շատ ավելի վաղ վարույթ սկսեր: Նա տարիներ շարունակ ոչինչ չէր անում:

**-Ինչո՞ւ ոչ:**

Մենք չենք կարող մարդկանց միտքը տեսնել: Բայց ԵԽ-ի գլխավոր քարտուղարն ընտրվում է նրա Խորհրդարանական վեհաժողովի կողմից, և այն ժամանակ այնտեղ գերակշռում էր Ադրբեջանի և նրա դաշնակիցների, այսպես կոչված, «սև կոալիցիան»: Այդ լոբբիի դեմ մեկ գլխավոր քարտուղար հազիվ կարողացավ վերընտրվել: ԵԽ-ի պատվիրակների ամենամեծ խումբը ռուսականն է՝ 18 պատգամավորներով: Ռուսներից բացի՝ քվեարկությունների ժամանակ Ադրբեջանի կողմից էին նաև իսպանացի և իտալացի պատգամավորների մեծամասնությունը, շատ արևելաեվրոպացիներ ու նաև ազդեցիկ ֆրանսիացիներ: «Լիբերալ» խմբակցության առաջնորդ Յորդի Խուսլան Բաքվի պաշտպան էր: Նրանք կային նաև ձախերի և սոցիալ-դեմոկրատների, բրիտանական տորիների, եվրոպական աջակողմյան պոպուլիստներ և «Եվրոպական ժողովրդական կուսակցություն» խմբակցության հաջորդական մի քանի ղեկավարների շրջանում: Այնտեղ «ժառանգական տնտեսությունները» բառացիորեն ստեղծվել էին տարիների ընթացքում. նոր պատգամավորները ստանձնում իրենց նախորդների կապերը Բաքվի հետ: Բելգիայում որոշ լիբերալներ, Իսպանիայում պահպանողականները, Արևելյան Եվրոպայում նախկին կոմունիստները զարմանալի սեր էին ցուցաբերում Ադրբեջանի հանդեպ: Բոլոր խմբակցությունների գերմանացիների մեծամասնությունը սկանդինավյանների և շվեյցարացիների հետ կողմ քվեարկեց մարդու իրավունքներին, իհարկե,

բացառություններով, որոնք առավել զարմանալի էին, այդ թվում՝ օրերս մահացած ՔԴՄ պատգամավոր Կարին Շթրենցը և Ակսել Ֆիշերը, որը մինչև վերջերս Բունդեսթագի հաշվեքննողական հանձնաժողովի նախագահ էր:

**-Այդ դեպքում ԵԿՆ-ի մերկացումները երբևէ օգտալուծ են արդյունք տվեցին:**

2016 թ. դեկտեմբերին հրապարակվեց մեր «Եվրոպական ճահիճ» զեկույցը և մեծ ուշադրության արժանացավ: Բայց դեռ մինչև 2017 թ. ապրիլը սաստիկ դիմադրություն կար մեղադրանքների անկախ քննության դեմ: Կային առանձին վճռական պատգամավորներ, ինչպես «Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության» (ԳՄԴԿ, գերմ.՝ Sozialdemokratische Partei Deutschlands) քաղաքական գործիչ Ֆրանկ Շվաբեն և հոլանդացի քրիստոնեա-դեմոկրատ Պիտեր Օմցիգտը, որոնք մոբիլիզացրին լայն կոալիցիա՝ պարզաբանման համար: Չնայած դրան՝ ամբողջ Եվրոպայում դեռ չափազանց քիչ բան է կատարվել: Վոլունտերի նկատմամբ Միլանի դատավճիռն ընթերցվում է դեդեկտիվի պես. էթե միայն այս քաղաքական գործիչը, որը Ստրասբուրգում էր սոսկ մի քանի տարի, միլիոններ ստացավ Բաքվից, կարելի է պատկերացնել, թե որքան գումար կարող է հոսած լինել 2003 թ. ի վեր: Բայց այդ առիթով մինչև այժմ միայն Իտալիայում և Գերմանիայում է հետաքննություն վարվում: Մյունխենի գլխավոր դատախազությունը հետաքննություն է իրականացնում Ակսել Ֆիշերի դեմ՝ մանդատակիրների կաշառված լինելու նախնական կասկածի պատճառով: Դրա համար Բունդեսթագը վերացրել է Ֆիշերի անձեռնմխելիությունը: Տան խուզարկություններ եղան նրա և, նախապես, Լինտների ու Շթրենցի մոտ:

**-Այժմ, հավանաբար, որոշ պատգամավորներ, իրավաբաններ, նշավակվում են: Բայց վտանգ չկա, որ վերջում կմնա սխալ տպավորություն, թե քաղաքական գործիչներն «առանց այդ էլ բոլորը կոռումպացված են»:**

Այդ տպավորությունն առաջանում է, երբ հիմնարկությունները տարիներ շարունակ հանդուրժում են կոռուպցիան, և շատ քչերն են քաջություն ունենում խոսելու դրա մասին և ճիշտ ժամանակին շտկելու այն: Մինչև 2017 թ. նոյնիսկ «Fifa»-ն ուներ ավելի խիստ հակակոռուպցիոն համակարգ, քան Եվրախորհուրդը: Այդ ժամանակվանից էս գոնե դա փոփոխել են ԵՄԽՎ-ում: Բայց վճռողական է, որ ո՛չ Ստրասբուրգում, ո՛չ Բեռլինում կուսակցությունները լուրջ կասկածների դեպքում չքողարկեն իրենց անդամներին: Չայնեթը երբեք աննշան խախտում չէ:

**- Դա կա՞ այդ ամենից:**

ԵՄ-ի խորը անկումը ցույց է տալիս, թե որքան պարզ է հիմնարկություններ կոռումպացնելը, երբ ավտորիտար վարչակարգը վճռականորեն և շատ փողով սկսում է գնել խորհրդարանականներ: Դա նախագուշացում է, քանի որ այլ պետություններ նույնպես դա, հավանաբար, փորձում են, մանավանդ որ նրանք տեսան, որ այս քաղաքականությունն ամբողջապես առանց ռիսկերի է Ադրբեյջանի վարչակազմի համար: Մինչ օրս Ալիևի համար ոչ մի հետևանք չի ունեցել այն, որ կոռուպցիան բացահայտվել է: Մի անգամ Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիան խիստ արձագանքեց դատավորների կոռուպցիային և 2006 թ. չեմպիոն Թուրինի «Յուվենտուսին» երկրորդ լիգայում դատապարտեց հարկադիր դադարի: Դրան հակառակ՝ ԵՄ անդամ պետությունները տարիներ շարունակ ոչնչի ուշադրություն չեն դարձրել և մինչև այսօր ոչինչ չեն արել անդամի կողմից այդպիսի պահվածքն օրենքից դուրս հայտարարելու համար: Նախարարների կոմիտեում Ադրբեյջանի ձայնի իրավունքը ոչ մի անգամ չէր կասեցվում: Ինչո՞ւ այլ պետություններ չպետք է հետևենին Բաքվի օրինակին:

**-«Խավիարային դիվանագիտության» հայտնաբերումն առաջին օրինակը չէ այն բանի համար, որ ԵԿՆ-ի զեկույցներն ազդեցություն են ունենում: Ի՞նչ պետք է անի վերլուծական կենտրոնը հասարակության վրա ներգործելու և փոփոխությունների մտցնելու համար:**

Տարիներ շարունակ համոզվածությամբ, նաև անհրաժեշտության դեպքում՝ հոսանքին հակառակ լողալ կարողանալու համար կարևոր է, որ հիմնարկությունները, որոնք ֆինանսապես օժանդակում են վերլուծական կենտրոնին, չազդեն այն բանի վրա, թե ինչպես և երբ որ թեմաներով է այն հրապարակում: Մա պատշաճում է մեր ամենակարևոր աջակիցներին՝ “Essener Mercator” հիմնադրամին, Շվեդիայի զարգացման նախարարությանը և “Open Society” հիմնադրամին: Դրան ավելանում է սեփական դերի հստակ սահմանումը. մենք աշխատում ենք գիտականորեն և անկախ: Մենք լոբբիստ չենք և գումար չենք վերցնում կառավարություններից՝ նրանց խորհուրդ տալու համար: Այսպիսով, մենք կարող ենք նաև ռիսկի դիմել: Քանի որ պարզ է՝ ով կարողանա ազդել, կհարձակվի:

**-Արտաքինից այնպիսի տպավորություն է, որ կարծես ԵԿՆ-ն աշխատում է բավականին դանդաղ: Երբեմն տարիներ է տևում, մինչև զեկույցները լույս են ընծայվում:**

Ազդեցությունը միշտ երկար տարիների աշխատանքի արդյունք է: Այն երբեք չի աշխատում միայն մեկ զեկույցի միջոցով, այլ աշխատում է շատ հրապարակումների, դասախոսությունների և հանդիպումների միջոցով: Ինչ-որ պահի ինչ-որ բան ընկնում է բերրի հողի վրա: Դրա համար անհրաժեշտ է տարիներ շարունակ մնալ մեկ թեմայի շրջանակներում: Մանավանդ որ մենք միշտ հետազոտում ենք իբրև թիմ: Որպես կանոն, անհատները չեն կարող մատուցել էմպիրիկորեն ապացուցված վերլուծություն ամբողջական թեմայի վերաբերյալ: Երբեմն լրացուցիչ՝ մենք բերում ենք փորձագետներ: Տարիներ առաջ մենք ինտենսիվ զբաղված էինք այն բանով, թե ինչպես կարելի է գնահատել պետական վիճակագրության որակը, և դրա համար թիմ բերեցինք Եվրոպայի «Եվրոստատ» վիճակագրական գործակալության նախկին աշխատակցին: Երբ խոսքը վերաբերում էր Արևմտյան Բալկանների պետությունների վիզաների ազատականացմանը, մենք սերտ համագործակցում էինք Եվրոպայի նախկին ՆԳ նախարարների հետ: Լեհաստանում օրենքի գերակայության ճգնաժամի վերաբերմամբ մենք տարիներ ի վեր ինտենսիվ համագործակցում ենք լեհ օրենսգետների հետ:

**-Կա՞ մի ռազմավարություն, որը վերլուծական կենտրոնի զեկույցների նման կարող է առանձնապես, արդյունավետ աշխատել:**

Վերլուծական կենտրոնի համար ազդեցությունը երբեք չի նշանակում մարդկանց ասել, թե նրանք ինչ պետք է մտածեն: Այն առաջանում է, երբ զեկույցը նկարագրում է իրավիճակն այնքան հավաստի և համոզիչ, որ ընթերցողներն ինքնուրույն գալիս են նման եզրակացությունների: Շատ զեկույցներ փորձում են համոզել միայն նրանց, ովքեր, առանց այդ էլ, նման հայացքներ ունեն: Բացի այդ, գործողությունների տարբերակները պետք է համոզեն գործնական մարդկանց: Նաև երբեք չպետք է մոռանալ, որ կարևոր գործառնություններով օժտված անձինք, որոնք կարող են որոշումներ կայացնել, ապրում են թերթերի՝ մշտական աճող լեռան վրա: Եթե վերլուծությունը պետք է թափանցի հարյուրավոր ուսումնասիրությունների մեջ, որոնք լույս են տեսնում ամեն շաբաթ, այն պետք է գրված լինի գրավիչ ձևով: Քանի որ, եթե մարդիկ մեկ ամիս անց այլևս չեն հիշում վերլուծական կենտրոնի զեկույցը, ապա այնպես է, որ կարծես այն երբեք չի գրվել: Հուսով եմ, որ յուրաքանչյուրն, ով կարդաց Ադրբեջանի և Եվրոպայի խորհրդի վերաբերյալ մեր զեկույցները, դեռ մեկ ամիս անց կկարողանա հիշել դրանց մասին: Ինչպես Միլանի դատախազները, որոնք սկսեցին մեր աշխատանքից: Մարդիկ պատմողական մտածողություն ունեն: Հետևաբար, մենք գրում ենք պատմություններ: Թղթերի միջոցով աշխարհի վրա ներգործելը կարող է գլուխ գալ միայն այդ դեպքում:

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ժերալդ Քնաուս** - ծնվել է 1970 թ. ավստրիական Բրամբերգում: Հիմնադրել է և 1999 թվականից ղեկավարում է Բեռլինի «Եվրոպական կայունության նախաձեռնություն» վերլուծական կենտրոնը՝ այսօր՝ 16 աշխատակցով: Սովորել է Օքսֆորդում, Բրյուսելում և Բոլոնիայում և եղել է Հարվարդի, Վիեննայի, Ստամբուլի և Մոսկվայի գործընկերը: «Կարո՞ղ է աշխատել միջամտությունը» (Ռոբի Ստյուարտի հետ) և «Ի՞նչ սահմաններ են մեզ պետք: Կարեկցանքի և վախի միջև. թռիչք, միգրացիա և ապաստանի ապագա» (Piper Verlag, 2020) գրքերի հեղինակն է: F.A.Z.

Աղբյուր՝ *Frankfurter Allgemeine Zeitung* (<https://www.faz.net/-gsf-aa6iy>)